Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2022-2023 ուստարի)
11-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

ա) Հայոց պատմություն (20 միավոր)

1. Ե՞րբ է տեղի ունեցել Կարբի գյուղի պաշտպանությունը թուրքական զորքի դեմ. 0,5 մ
ա) 1723 թ. գարնանը բ) 1724 թ. գարնանը գ) 1725 թ. գարնանը դ) 1726 թ. ամռանը
2. Ո՞վ էր 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Երևանյան ջոկատի հրամանատարը. 0,5 մ.
ա) Վ. Բեհբութով բ) Մ. Լոռիս-Մելիքով գ) Ա. Տեր-Ղուկասով դ) Վ. Մադաթով
3. Որտե՞ղ է ստեղծվել «Միություն ի փրկություն» գաղտնի ընկերությունը. 0,5 մ.
ա) Վան բ) Մեծ Ղարաքիլիսա գ) Կարին դ) Մոսկվա
4. Ո՞վ էր Զեյթունի 1862 թ. ապստամբության ընդհանուր ղեկավարը. 0,5 մ.
ա) Ասատուր Նորաշխարհյան գ) մահտեսի Գրիգոր
բ) Մկրտիչ Յաղուբյան դ) Մարկոս Թաշճյան
5. Ո՞ր թվականին է հիմնադրվել Երևանի նահանգը. 0,5 մ.
ա) 1840 թ. բ) 1844 թ. գ) 1846 թ. դ) 1849 թ.
6. Որքա՞ն էր Շուշիի բնակչության թվաքանակը 1910 թվականին. 0,5 մ.
ա) 42 հազ. բ) 35 հազ. գ) 32 հազ. դ) 30 հազ.
7. Ո՞ր գավառում էր գտնվում Արծափ ամրոցը. 0,5 մ.
ա) Ծաղկոտն բ) Կոգովիտ գ) Բագրևանդ դ) Ռշտունիք
8. Ե՞րբ են Արևմտյան Հայաստանի համար տեսուչներ ընտրվել Հ. Վեստենենկը և Ն. Հոֆը. 0,5 մ.
ա) 1914 թ. մայիս գ) 1914 թ. հունվար բ) 1914 թ. հունիս դ) 1914 թ. ապրիլ
9. Ե՞րբ են Մ. Գիրսը և Հ. Վանգենհայմը կազմել Արևմտյան Հայաստանի բարենորոգումների ծրագիրը (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը): 0,5 մ.
10. Ե՞րբ է սկսվել Բալկանյան երկրորդ պատերազմը (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը): 0,5 մ.
11. Ո՞վ է ղեկավարել 1903 թ. Սասունում ստեղծված ինքնապաշտպանության մարմինը: 0,5 մ.
12. 1830 թ. զանգվածային վերաբնակեցման շրջանում որքա՞ն գյուղեր են վերաշինել և հիմնադրել էրզրումահայերը Ախալքալակի գավառում: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
ա) Շահամիր Շահամիրյանի կողմից Մադրաս քաղաքում հայկական տպարանի հիմնումը
բ) Անգլիական «Արևելահնդկական ընկերության» և հայ վաճառականության միջև պայմանագրի կնքումը
գ) «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքի թարգմանությունը ռուսերեն և լույսընծայումը Պետերբուրգում
դ) «Որոգայթ փառաց» գրքի հրատարակումը
ե) Մովսես Սարաֆյանի կողմից Հայաստանի ազատագրության ծրագրի ներկայացումը Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային
զ) Հովսեփ Էմինի վերջնական վերադարձը Հնդկաստան
է) Հալիձորի ճակատամարտը
ը) Աբրահամ սպարապետի հրամանատարությամբ Գյուլիստանի սղնախի հերոսական դիմադրությունը
թ) Ռուսաստանի և Վրաստանի միջև դաշնագրի կնքումը Գեորգիևսկում

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
1. Վարդան Արևելցի 2. Մատթեոս Ուռհայեցի 3. Սմբատ Գունդստաբլ
4. Ներսես Շնորհալի 5. Թովմա Մեծոփեցի 6. Ամիրդովլաթ Ամասիացի

ա. «Ժամանակագրություն» բ. «Թուղթ ընդհանրական» գ. «Տարեգիրք»
դ. «Տիեզերական պատմություն» ե. «Անգիտաց անպետ» զ. «Պատմութիւն Թամուր Լանկին և հաջորդաց իւրոց»

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա) Հայազգի Իվան Կարապետը Արցախ է ժամանել՝ հավաստելու հայերի ազատագրական զինված պայքարին ռուսական իշխանությունների օժանդակությունը:
բ) Եսայի Հասան-Ջալալյանի մահվանից հետո Գանձասարի կաթողիկոսարանը կորցրել է հայոց ազատագրա-

կան շարժման կարևոր կենտրոններից մեկը լինելու իր նշանակությունը:
գ) Մովսես Սարաֆյանի ծրագրի համաձայն՝ Հայաստանն ազատագրելուց հետո պետք է ստեղծվեր հայկական պետություն, և Արցախի մելիքներից մեկը դառնալու էր Հայաստանի թագավոր:
դ) Ռուսական իշխանությունների կողմից Հայոց եկեղեցու բարեփոխման նպատակը հայ ժողովրդին կրոնական ինքնուրույն համայնքի կարգավիճակից զրկելն էր:
ե) Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով Բարձր դուռը պարտավորվում էր Արևմտյան Հայաստանում անհապաղ բարեփոխումներ անցկացնել և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չեչեններից:
զ) Բեռլինի պայմանագրում Հայաստան անունը փոխարինվել է «հայկական օջախ» բառակապակցությամբ, իսկ Ալաշկերտը, Բայազետը և Բասենը, ինչպես խոստացել էր Անգլիան, վերադարձվել են Օսմանյան կայսրությանը:
է) 19-րդ դարի 50-70-ական թթ. հայ իրականության մեջ գոյություն ունեցող բազմապիսի ուղղությունների մեջ հստակորեն զանազանվել են պահպանողական և ազատական (լիբերալ) ուղղությունները:
ը) Պոլսահայ ազատականների շարքում առանձնանում էին երգիծական ժանրի երկու խոշոր դեմքեր՝ «Մեղու» հանդեսի խմբագիր Ստեփանոս Նազարյանցը և գրող, հրապարակախոս Հակոբ Պարոնյանը:
թ) 1882 թ. Մոսկվայում մի խումբ հայ ուսանողներ հիմնել են «Հայասեր-ազգասեր» խմբակը, որը գաղտնի կերպով տպագրում էր առաջին հայ քաղաքական լրագիրը՝ «Ազատության ավետաբեր» թերթը:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)
ա) Երևանի խանության կառավարիչ սարդարը (զորագլուխ, զորահրամանատար) օժտված էր ռազմավարչական մեծ իշխանությամբ:
բ) 1827 թ. գարնանը, ռուսական զորահրամանատարության կոչով, Թիֆլիսում, Արցախում և այլ վայրերում կազմակերպվում են հայկական կամավորական ջոկատներ (բրիգադներ):
գ) 1863 թ. Ազգային սահմանադրության համաձայն՝ արևմտահայության կյանքը կազմակերպող մարմիններից Ազգային ժողովը կոչվել է նաև Ազգային պատգամավորական խորհուրդ:
դ) Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում պահպանվում էին միջնադարից եկող հողատիրության ձևերը՝ պետական, մասնատիրական և հոգևոր հաստատություններին պատկանող (վակուֆային):
ե) 15-րդ դարում Կաֆա քաղաքի 70 հազար բնակչից 46 հազարը հայեր էին. պատահական չէ, որ Ղրիմի թերակղզու հարավարևելյան շրջանը հաճախ կոչվել է Նոր Հայաստան:
զ) 20-րդ դարի սկզբին ռուսական վարչակարգի դեմ հայ ժողովրդի դիմադրությունը կազմակերպելու նպատակով Թիֆլիսում ստեղծվել է «Ազգային կենտրոնական վարչություն»:
է) 1912 թ. հոկտեմբերին Թիֆլիսում ձևավորվել է համազգային նոր կազմակերպություն՝ Հայոց ազգային կենտրոնական խորհուրդ (կարճ՝ Հայոց ազգային խորհուրդ):
ը) 1916 թ. հունիսին Արևմտյան Հայաստանում ստեղծվել է հատուկ գեներալ-նահանգապետություն, կազմվել են 29 շրջաններ, որոնք միավորվել են չորս օկրուգների մեջ (Վանի, Խնուսի, Էրզրումի և Տրապիզոնի):

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա) Արցախի (Ջրաբերդի, Գյուլիստանի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի) մելիքությունները կոչվում էին նաև Խամսայի մելիքություններ:
բ) Խամսայի մելիքությունների կառավարիչ նշանակվել է Դիզակի մելիք Եգանը, որի մահից հետո կառավարչի պաշտոնն անցել է նրա որդուն՝ մելիք Մանուչարին:
գ) 1764 թ. Հովսեփ Էմինը և Հերակլ II-ը խրախուսական նամակներ են ուղարկում Մշո Ս. Կարապետ վանքի վանահայր Հովնանին, սակայն Երևանում խանի մարդիկ նամակատարին ձերբակալում են:
դ) Հովսեփ Էմինը 1766 թ. վերադառնում է Հայաստան և հանգրվանում Գետաշենում՝ Գյուլիստանի մելիք Շահնազարի մոտ:
ե) 1874 թ. Երևանի նահանգը տրոհվել է յոթ գավառների (Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Նախիջևանի և Զանգեզուրի):
զ) 1874 թ. վարչական բաժանումով հայկական Արցախը և Գանձակը մնացել են Ելիզավետպոլի նահանգի մեջ, իսկ Լոռին և Ջավախքն ընդգրկված էին Թիֆլիսի նահանգի կազմում:
է) 1882 թ. Կովկասի փոխարքայությունը վերափոխվել է կառավարչապետության:
ը) Մ. Փորթուգալյանի աշակերտները հետևում էին Ֆրանսիայի Մարսել քաղաքում լույս տեսնող «Արմենիա» թերթի ուղղությանը, իրենց կոչում էին «Արմենական», այստեղից էլ ծնունդ է առել կուսակցության անվանումը:

թ) «Դրոշակ»-ում 1894 թ. տպագրված ՀՅԴ ծրագրում ասվում էր, որ ապստամբության ճանապարհով անհրաժեշտ է հասնել Արևմտյան Հայաստանի ազատությանը, որով այդ փուլում հասկացվում էր հայկական նահանգների ինքնավարության հաստատումը:

1	2	3

18. Գտե՛ք, առանձնացնելով գրե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)
1898 թ. Լոնդոնի համագումարում հնչակյան կուսակցությունը պառակտվում է երկու թևի՝ սոցիալիստական և ազգային:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
«Յուրաքանչյուր հայ ընտանիք թող իրենից ներկայացնի առանձին հայ դպրոց»:
ա. Ո՞ր կազմակերպությունն է այդպիսի կոչով դիմել հայությանը:
բ. Ինչպե՞ս էր կոչվում փաստաթուղթը, որից մեջբերում է արված:
գ. Ինչի՞ն ի պատասխան է հրապարակվել այդ փաստաթուղթը:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
Վանի ինքնապաշտպանությունն սկսվել է 1915 թ. … …-ին (1) և տևել մոտ 1 ամիս: … (2) թաղամասում ստեղծվել է զինվորական մարմին, որը ղեկավարում էր Արմենակ Եկարյանը: Վանի ինքնապաշտպանության ընդհանուր կազմակերպիչը և ոգեշնչողը … …-ն (3) էր, ով հետագայում ռուսական բանակի հրամանատարության կողմից նշանակվում է Վանի և ազատագրված շրջանների նահանգապետ:

21. Տրամաբանական խնդիր. *Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 12800 տարեկան է, քարի դարի կոնկրետ ո՞ր պարբերափուլի (ժամանակաշրջանի) ընթացքում է ստեղծվել:* 1 մ.

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:
բ. Ո՞ր գետի աջակողմյան վտակների ավազանն է զբաղեցնում այն:

23. Ամենայն Հայոց ո՞ր Կաթողիկոսն է պատկերված լուսանկարում. 0,5 մ.

24. Աշխատանք 1915 թ. հոկտեմբերի 19-ին տպված ծաղրանկարի հետ (պատասխանե՛ք հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Կենտրոնում պատկերված անձնավորությունը ո՞ր պետությունն է խորհրդանշում:
բ. Ո՞ր իրադարձության մասին են ծաղրանկարում տեղ գտած դաժան խոսքերը:

բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Ե՞րբ են արիական ցեղերը ներթափանցել Հնդկաստան և տիրել Հյուսիսային Հնդկաստանին. 0,5 մ.
ա) Ք.ա. XXI-XX դդ. բ) Ք.ա. XX-XIX դդ. գ) Ք.ա. XVIII-XVII դդ. դ) Ք.ա. XVI-XV դդ.
2. Ո՞ւմ օրոք է Ասորեստանն իր գերիշխանությունը հաստատել Կիպրոսում. 0,5 մ.
ա) Թուկուլթի-Նինուրտա I բ) Սալմանասար I գ) Թիգլաթպալասար III դ) Սարգոն II
3. Ո՞ր կայսեր օրոք է Հռոմեական կայսրությունը բաժանվել երկու մասի՝ Արևմտյան և Արևելյան. 0,5 մ.
ա) Դիոկղետիանոս բ) Թեոդոսիոս I գ) Կոստանդիանոս դ) Հռոմուլոս-Ավգուստուլոս
4. Ե՞րբ է Պիպին Կարճահասակը հռչակվել թագավոր. 0,5 մ.
ա) 732 թ. բ) 741 թ. գ) 742 թ. դ) 751 թ.
5. Ինչպե՞ս է կոչվել Շարլ դը Գոլի գլխավորությամբ գերմանական զավթիչների դեմ ծավալված շարժումը: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
1. Ցին կայսրության հիմնադրումը Չինաստանում
2. Տոկուգավայի սյոգունության հաստատումը Ճապոնիայում
3. Գերմանական կայսրության սահմանադրության հաստատումը Ռայխստագի կողմից
4. Ավստրիայի և Հունգարիայի միջև համաձայնագրի կնքումը, Ավստրո-Հունգարիայի ձևավորումը

1	2	3	4

ա. 1871 թ. բ. 1867 թ. գ. 1644 թ. դ. 1603 թ.

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա) 1898 թ. Կուբային օգնելու պատրվակով ԱՄՆ-ը պատերազմ է հայտարարել Իսպանիային, կարճ ժամանակում Իսպանիան պարտվել է, իսկ ԱՄՆ-ի զորքերը հաստատվել են Կուբայում:
բ) 1902 թ. Կուբան հռչակվել է անկախ պետություն, սակայն ամերիկյան զորքերը, համաձայն երկու երկրների միջև կնքված ռազմական դաշնագրի, շարունակել են մնալ Կուբայի տարածքում:
գ) 1899-1902 թթ. Մեծ Բրիտանիայի և բուրերի միջև տեղի ունեցած պատերազմին ակտիվորեն ներգրավված էին նաև բնիկ աֆրիկացիները:
դ) 1911-1912 թթ. պատերազմելով Օսմանյան տերության դեմ՝ Իտալիան նրանից զավթել է Տրիպոլիտանիան և Կիրենաիկան. այդ տարածքում ստեղծվել է Լիբիա գաղութը:

ե) Հաղթելով 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմում՝ Ճապոնիան կարողացել է ամրապնդվել Կորեայում, Մանջուրիայում, Ռուսաստանին հարող ծովերում, զավթել Սախալինը և Կերչի թերակղզու մի մասը:
զ) Բեռլինի 1878 թ. վեհաժողովում տերությունները պատերազմի սպառնալիքով ստիպել են Ռուսաստանին հրաժարվել իր նվաճումների մի մասից. օսմանյան սուլթանին օգնելու դիմաց Ավստրո-Հունգարիան գրավել է Բոսնիան, Հերցեգովինան և Խորվաթիան, Իսկ Անգլիան՝ Կիպրոսը, Կրետեն, ավելի ուշ՝ նաև Եգիպտոսը:
է) 1918 թ. նոյեմբերի 11-ին Կոմպիենյան անտառում՝ դաշնակից զորքերի հրամանատար մարշալ Ֆ. Ֆոշի շտաբ-վագոնում, ստորագրվել է զինադադար, որով Գերմանիան ընդունել է իր պարտությունը:
ը) 1933 թ. հունվարի 30-ին Հիտլերը զբաղեցրել է Գերմանիայի ռայխսկանցլերի (վարչապետի), իսկ 1934 թ. օգոստոսի 1-ին, նախագահ Հինդենբուրգի մահից հետո, նաև երկրի նախագահի պաշտոնը:

1	2	3

8. Թվարկե՛ք՝ 2 մ. (4 X 0,5 մ.)
ա. Նացիստական Գերմանիայի կառավարման համակարգում Ա. Հիտլերի մերձավոր համախոհներից 2-ին,
բ. 1940 թ. Բրիտանիան նվաճելու գերմանական ձախողումից հետո Արևելյան Եվրոպայում գերմանամետ վարչակարգ հաստատած պետություններից 2-ը:

9. Աշխատանք ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Մինչկոլումբոսյան Ամերիկայի ո՞ր պետությունն է պատկերված մուգ գույնով:
բ. Ո՞րերորդ դարում է այն հասել իր հզորության գագաթնակետին և ստացել նշված սահմանները:

10. Նոր դարերի ո՞ր նշանավոր գործչի նկարն է պատկերված ստորև. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա. Ո՞վ է ծաղրանկարի կենտրոնում պատկերված անձը:
բ. Ո՞ր պետության դեմ պատերազմից հետո է կազմվել այս ծաղրանկարը, որտեղ փորձում են բուժել պարտված գործչին:
գ. Ի վերջո, ի՞նչ համակարգ ստեղծվեց այս անձնավորության ղեկավարած պետության վերջնական պարտությունից հետո:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

09.03.2023 թ.